## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/6-ՀՈԱԿ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր 20 օգոստոսի 2026թ.

2026թ. օգոստոսի 20-ին՝ ժամը 16:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4, հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման թիվ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/6-ՀՈԱԿ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Թորոսյան՝ | Մեծամորի Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի Պ/Կ, |
| Կ. Մնոյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի պահեստապետ, |
| Հ. Մանասյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կանաչապատման խմբի ղեկավար, |
| Մ. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կադրերի բաժնի տեսուչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Թորոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մուրադյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հայտարարության և հրավերի փոփոխված տեքստերը հաստատելու մասին:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը.

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Թիրոյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Մնոյան ____________

Հ. Մանասյան ____________

Մ. Սարգսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________